

ՆԱՅԱՍԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՏԱՎՐՈՍ-66» ՖԻՐՄԱ ՍՊԸ-Ի՝ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ 19.10.2012Թ. ՄՈՒՏՔԱԳՐՎԱԾ ԹԻՎ 7-66 ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆՏ սահմանադրական դատարանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 69-րդ հոդվածի 8-րդ մասի, աշխարակարգային նիստում քննելով ՆՏ քաղաքացիական օրենսգրքի 207-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 564-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ «Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ի դիմումի ընդունելիության հարցը, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 32-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով, գտնում է, որ գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետևյալ պարճառաբանությամբ.

1. Դիմողը վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը փորձում է հիմնավորել՝ ենթադրյալ օրենսդրական բացը մաքսանշելով, ինչի վերաբերյալ ՆՏ սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի եւ օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է, որ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի եւ սահմանադրական դատարանի իրավասությունները դիֆարկելով իշխանությունների փարանջափման սկզբունքի համապեքսպում՝ հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գրնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմադիվ պարվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է փվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք, ինչպես նաեւ՝ զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է նաեւ, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձեւավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

2. Դիմողը վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց, ինչի վերաբերյալ ՆՏ

սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա նման դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Ներելաբար, այս առումով ես առկա է նշված դրույթի մասով դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Տավրոս-66» ֆիրմա ՍՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**ՆԱՅԱՍԱՐԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՆԴԱՄ**

Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ